ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ 67 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

28.06.2021 17:09

Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի 67 շրջանավարտ 2021թ-ի հունիսի 26-ին ստացան փաստաբանական գործունեության արտոնագրեր:

ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդի հանդիսավոր նիստով խորհրդի անդամները միաձայն քվեարկեցին որակավորման բանավոր և գրավոր քննությունները հաղթահարած շրջանավարտներին արտոնագրեր տրամադրելու օգտին:

Ողջույնի խոսքում Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը փաստաբանական համայնք նոր մուտք գործող փաստաբաններին խորհուրդ տվեց խուսափել կոռուպցիոն ռիսկերի մեջ ներգրավվելուց:

«Դուք դժվար քննական գործընթացների միջով անցել, հասել եք այս հանգրվանին և, ինքներդ էլ գիտեք, որ այս համայնք մուտք եք գործել միայն ձեր գիտելիքներով և ջանքերով, այլ ոչ թե կոռուպցիոն սխեմաներով: Եվ հենց այստեղ է, որ պետք է հավատաք՝ առանց կոռուպցիա կյանք կա: Ձեր ավագ գործընկերները, որոնց հետ շփվել եք փաստաբանական դպրոցում միշտ խորհուրդ են տվել ձեզ հեռու մնալ կոռուպցիայից, որովհետև կոռուպցիան ոչնչացնում է փաստաբանի մասնագիտությունը: Եվ միշտ հիշեք, որ ամենակարևոր շարժիչ ուժը ցանկացած ոլորտում բարոյականությունն է: Բարոյական չորս առաքինություններն են՝ խոհեմությունը, արիությունը, արդարությունը և չափավորությունը և ես, որպես ձեր գործընկեր, խորհուրդ կտամ ձեր գործունեության ընթացքում անպայման հետևել այս առաքինություններին»,- նշեց Արա Զոհրաբյանը:

Արա Զոհրաբյանը նաև շնորհակալություն հայտնեց փաստաբանական դպրոցի տնօրենին և ողջ աշխատակազմին՝ երկրի համար ծանր ժամանակաշրջանում ունկընդիրների ուսումնառությունը բարձր մակարդակով և պատշաճ որակով կազմակերպելու համար:

Իրենց նոր գործընկերներին ողջույնի և շնորհավորանքի խոսքեր ուղղեցին նաև ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանը՝ փաստաբաններին մաղթելով արդյունավետ գործունեություն և նորանոր ձեռքբերումներ:

«Շնորհակալություն եմ հայտնում դպրոցի աշխատակազմին, պրոֆեսիոնալ դասախոսական կազմին, որ այս դժվար պայմաններում, առկա և հեռակա ուսման ձևաչափերը համատեղելով, ուսումնական գործընթացը կարողացան ապահովել հավուր պատշաճի: Քիչ հետո դուք կդառնաք փաստաբաններ. փաստաբանական դպրոցի հետ, խնդրում եմ կապը չընդհատել, թե՛ վերապատրաստման շրջանակներում, թե՛ իրավաբանական կլինիկայի շրջանակներում: Շնորհավորում եմ բոլորիդ, բարի գալուստ փաստաբանական համայնք»,- նշեց Ս. Բաբայանը:

«Այն հնարավորությունը, որ տվել է ձեզ փաստաբանական դպրոցը, մենք այդ հնարավորությունը չենք ունեցել և ես ամեն անգամ լսարան մտնելիս, բարի նախանձով եմ նայում ձեզ, որովհետև դուք հնարավորություն ունեք լավագույն մասնագետներից ստանալ այն, ինչ այդ մասնագետը ստացել է տարիների ընթացքում: Ես շնորհակալություն եմ ուզում հայտնել նաև ձեզ, քանի որ ամեն անգամ լսարան մտնելիս ես ինչ-որ բան ձեզ սովորեցնելով, սովորում եմ նաև ձեզանից: Բարի ճանապարհ եմ մաղթում ձեզ»,- իր խոսքում նշեց Կարեն Մեժլումյանը:

Ելույթներով հանդես եկան նաև Փաստաբանական դպրոցի շրջանավարտներ՝ Զարուհի Պապոյանը և Աբգար Պողոսյանը: Նրանք իրենց խոսքում շնորհակալություն հայտնեցին Փաստաբանական դպրոցի դասախոսական կազմին և աշխատակազմին պատերազմյան և համաճարակային պայմաններում ուսումնառության գործընթացի պատշաճ որակով կազամակերպելու համար:

Ապագա փաստաբան Զարուհի Պապոյանը նշեց, որ ուսումնական գործընթացը հիմնված է եղել գիտելիքի և բարեխղճության սկզբունքի վրա և իրենք հնարավորություն են ունեցել ոլորտի լավագույն մասնագետների կողմից ձեռք բերել փորձ և գիտելիքներ:

Աբգար Պողոսյանը, շնորհակալություն հայտնելով դպրոցի դասախոսական կազմին, նշեց,- «Արժանանում ենք փաստաբանական մեծ ընտանիքի մի մասնիկը կազմելու պատվին: Իրապես հեղինակություն վայելող մասնագիտություն ձեռք բերելը ոգևորող և պարտավորեցնող է: Տարիների պայքարի արդյունք է այն, որ համայնքը անկախ մեր շուրջ տեղի ունեցող իրադարձություններից, ամենաանցնցումն է: Մենք ժառանգում ենք շատ ավելի հարմար մասնագիտական կարգավիճակ, քան

այստեղ նստած մեր ավագ գործընկերները, որ այսօր հենց նրանց շնորհիվ հասարակությունը մեծ վստահություն ունի փաստաբանների նկատմամբ: Եվ այդուհանդերձ, մենք եկել ենք ասելու, որ չենք պատրաստվում միայն շարունակել բարի ավանդույթները, մենք ունենալու ենք մեր ձեռագիրը, մեր ուրույն տեղը համայնքում՝ դրական բեկում մտցնելու պատրաստակամությամբ»:

Ելույթներին հաջորդեցին փաստաբանների հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման արարողությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
EREBUNI
PLAZA
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
CHAMBER of ADVOCATES of the REPUBLIC of ARMENIA
ПАЛАТА АДВОКАТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
EREBUNI
PLAZA
Ն ամոն Բաբայան
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

Erebuni Plaza
business center
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
EREBUNI
PLAZA
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })